ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 26 -Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Արտակարգ իրավիճակներում բնակչության մասին» օրենքի 15-րդ հոդվածի «բ», «Քաղաքացիական պաշտպանության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի N 46-Ն որոշման հավելված 1-ի 16-րդ կետի 2-րդ ենթակետերով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2026 թվականի հիմնական միջոցառումների պլանը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության փրկարար ծառայության Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության պետ, փրկարար ծառայության գնդապետ Հակոբ Սարգսյանին:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

05.02.2026

X

ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

Подписано: ARSENYAN VAHAGN 2708930639

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Վ. ԱՐՍԵՆՅԱՆ

2026թ. փետրվարի 5
ք. Եղեգնաձոր